

ԻՌՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆ

Նախնի եռայծմեան Հայր Կարառանարու
Քեան դեմ : Նախնի Մեղեցի քաջունի :

Եղբային պարբերականները բա-
ւական ժամանակէն ՚ի վեր անընդ-
հատ կը հրատարակեն Սոսի, Սանայ
կարնոյ և այլ գաւառաց հարստահա-
րութիւնները և Կրօնի ու մարդկային
պատուոյ դէմ եղած սոսկալի արարք-
ները, որոնք վայրենի Քիւրտերու
ձեռքով կը գործուին ՚ի վնաս և ՚ի նա-
խատինս Հայ ժողովրդեան : Այս
անցքերը, որոնք իրենց վայրագ ե-
րեւութիւնով ոչ միայն զգայուն Հայու-
սրտի խորքը կը շարժեն, այլ և մարդ-
կային պատիւը ճանաչող օտարականի
հոգին եւս ՚ի վրէժինդրութիւն կը
վաւեն, այս անցքերը, որոնք վերջին
ժամանակս գրաւած են Օսմանեան
կառավարութեան մտադրութիւնը և
որոց մասին հետզհետէ տնօրէնու-
թիւններ կը լինին, այս անցքերը ի-
րենց ւղղած սաստիկ տպաւորու-
թեամբ մի տխուր խորհրդածութեան
կը հրաւիրեն զմեզ :

Այլ կը պատկերացնենք մեզ հին
և նոր հայութիւնը իրենց բոլոր գը-
ծադրութեամբ, մի խորին Թախծու-
թիւն կը տիրէ մեր սրտին վրայ, Սա-
սուն զի կը տեսնենք, որ Քիւրտերու
հարստահարութիւնները Յուսուփի,
Բուղայի, Թեմուրլանգի, Չինգիս-
խանի և Հահաբատի աւերմունք-
ներէն ահռելի չեն, որով Հայոց աչ-
խարհը մերթ ամայացաւ հրկիզու-
թեամբ և գերութեամբ և մերթ ող-
ղեցաւ արեամբ : Կը տեսնենք որ Քիւր-
տերը Հայոց ազգէն բազմաթիւ չեն,
բայց կը վնասին, երբ համեմատելով
կը տեսնենք միանգամայն որ նախնի հա-
յութիւնը սոսկալի արհաւիրներու

դիմադրաւելու հոգի կը կրէր, իսկ
այժմեան հայութիւնը անարիւն և ան-
կենդան դիակի կը նմանի : Հին հայու-
թիւնը իւր պատիւը, իւր Կրօնի սրբու-
թիւնը պաշտպանելով կը մեռնէր կամ
կը մեռուցանէր պատերազմի դաշտին
վրայ և արիւնահեղ հալածանքներու
մէջ : Իսկ այժմեան հայութիւնը թեթե-
ւամիտ տղայի նման միայն կ'ողբայ և կը
ճգայ և կամ ընդարմայած ծերունիի
նման լոկ անէծքներ կը կարդայ : Հին
հայութիւնը պատուով մեռնելով ան-
պատիւ կեանքէն հարիւրապատիկ ան-
գամ աւելի նախապատիւ կը համարէր-
իսկ այժմեան հայութիւնը ստրկական
ցածութեամբ իւր պատիւը կը զոհէ
իր աւօրեայ կենաց պատապարտութեան
համար : Հին հայութիւնը կը տագ-
նապէր, բայց կը գործէր, իսկ նոր հա-
յութիւնը կը տագնապի, բայց միայն
կը խօսի : Ի՞նչ ահագին անդունդ հին
և նոր հայութեան մէջ ազգային և կը-
րօնական պատուոյ նկատմամբ : Հին
հայութեան պատմութեան մէջ արիւ-
սրտութեան և կրօնասիրութեան դիւ-
ցազնական գեղեցիկ օրինակներ կը
կարդանք և կը մխիթարուինք : Իսկ
մեր գաւակները պիտի պատկառին մեր
այժմեան հայութեան սրտմոլութիւնը
կարդալով : պիտի պատկառին, երբ
կարդան, որ Հայու սրբութիւնը,
Հայու ամուսինը իւր առջեւ անար-
գուեր են խումբ մի Քիւրտ ելուզակ-
ներէ, և Հայը իբրեւ անգգայ անա-
րիւն և անսիրտ արարած՝ անշարժ և
անմուռնչ նայած է : Պիտի պատկա-
ռին, երբ լսեն, որ գաւառական Հայ-
երը իրենց մարդկութեան և ազգու-
թեան պարտքը կատարած համարած
են՝ միայն ողբախառն նամակներ և տե-
ղադրութիւններ ուղղելով Պօլսոյ ազ-
գային Սարգսութեանը, և սա՛ երբեմն
անմտադրութեան տալով և երբեմն

միայն Վառաձարութեանը իմացնելով կարծեր է թէ լրուում տուած է օրի նայ և մարդւորէից : Վայ այն թշուառ պատմագրին , որ պիտի ստիպուի իւր ազգի ներկայ ցածութիւնը , տղայաւ կան ողբն ու կոծը , Վիւրտերու հա ճայից ստրկանալը և մանաւանդ ան սիրտ և անզգայ մարդկութիւնը պատ մութեան մէջ առնուլ և ապագայից աւ անդէլ :

Թող ամենեւին չը նեղանան մեր գաւառական ազգայինք , մանաւանդ Սուշի և Վանայ Հայք , մեր խիստ կօղբերէն , վասն զի երբ իրենց նամակ ները և տեղագրութիւնները կը կար դանք լրագրաց մէջ , որչափ որ կը սրտ մոխրէ Վիւրտերու բարբարոսութեան դէմ , այնչափ եւս արդար ցամամբ կը պրտմոխրէ իրենց ցածութեան և սառ նասրտութեան դէմ և կրտիրուինք խորին թախծութեամբ իմաստասիրել , որ կամ հայութիւնը խաղառ մեռած է գաւառաց մէջ , և կամ նամակաց և տեղագրութեանց պարունակութիւնը չափազանց է և անստոյգ : Վասն զի , երբէք կարող չենք երեւակայել , որ մարդու կրօնական և բնոյնեկան պա տիւր իւր առջեւ չորաչար ունահար լինի և ինքը նայելով և վշտանալով մի այն գոհ լինի : Այս կրօնասիրութիւն և մարդկութիւն չէ , այլ կատարեալ անզգայութիւն , կատարեալ մեռելու թիւն :

Վուցե հարցուի մեզ թէ ի՞նչ կա րող են առնել գաւառական Հայերը Վիւրտերու բարբարոսութեան դէմ : Կենդանութիւն , արիւն և սիրտ ունե ջող մարդկանց համար յայտնի է արդէն այս հարցման պատասխանը , և մենք բացատրել աւելորդ կը համարինք , վա տըն զի կրօնասիրութեան և ազգասի րութեան քաղաքործութիւնները հարց ու պատասխաններով և փաստաբա

նութիւններով չեն վճարուիր , այլ սրտով և եռանդով : Վայն սառնա սիրտներու սիրտն անգամ ջերմացնե լու համար և հայրական հին կենաց գեղեցիկ օրինակով նորերու անզգա յութիւնը յանդիմանելու համար արժան կը համարինք ոչ թէ Սէջի հին տղամարդի , այլ կին մարդոյ ա րիասրտութիւնը յառաջ բերել , ու րուն ականատես եղած է պատմիչն ին քըն թովմայ Սեծոբեցին :

« Վայց զարմանալի գործ մի գործու եցաւ այս աւուր մէջ , կ'ատէ յի չեալ պառմագիրն : Սի երկիւղած և հաւատարիմ կին Սուշ գաւառէն՝ ու նէր մի յոյժ պատուական և բաղձալի որդի , որ դէմքով հրեշտականման էր և հասակաւ եօթն կամ ութ տարե կան : Երբ Լրեւելից հեթանոս եւ բարբարոս ազգաց զօրքերը խուծայ ընրան վրայ բարձրացան , քրիստոնէ ից շատերը աստ և անդ փոխած ամ լայցած էին անսառններու և ծմակ ներու գաղտագողի տեղերը : Լ'սորէն ները տեսնելով այս՝ կ'արշաւէին քրիս տոնէից վրայ և կամէին գերել : Իսկ տղորմելի սրբասէր և երկիւղած մայրը յետ դառնալով և տեսնելով , որ կը գան կը մօտենան չարագործները՝ մա նուկը իր ձեռքէն առնելու , սուրը ձեռքն առաւ և իւր ցանկալի որդին մորթեց և իբրեւ անմեղ գառն պա տարագեց ի սէր անմահ գառն (Յի սուսի Քրիստոսի : Երկիւղած կինը իւր որդին փոխադարձ տուաւ երկնաւ ւոր Հօրը , որ իւր միածին լորդին՝ Վառն անարատ պատարագեց զենով և խա յելով սուրբ Վողգոթայի խաչի վրայ : Եւ ինքը մանկան մայրը սակաւ ինչ յառաջ երթալով և մի բարձրաւան դակ քարի վրայ բարձրանալով ինքզին քը ի վայր ընկեց և գոհութեամբ վառ աւարելով Յիսուսի Քրիստոսի ա

նունը՝ աւանդեց հոգին 7 16-ն աւ
բեծութիւն, 17-ն արիստոտելութիւն
և 18-ն պանչելի նիւթ թատրերգու
թեան:

Կը տեսնենք ահա, որ Սէնցի կինը
իւր պատիւը պահպանելու համար և
որդին ապագայ հաւատաւորացութենէ
կամայ չարիքներէ ազատելու համար՝
աւելի լաւ կը համարի իւր որդւոյ
հետ միասին զոհուիլ քան թէ կեն
դանի մնալ, բարբարոսաց ձեռքը մատ
նուիլ և անպատիւ կեանք ունենալ:

Եթէ այս դիւցազնուհի կինը այժ
մեան Սէնցի կամ Վանցի կանանց
հետ համեմատենք և տեղական նկա
րագրութեանցն եւս հաւատ ընծայ
ենք, արդեօք 17-ն ահագին անդունդ
պիտի տեսնենք հին և նոր հայ կա
նանց մէջ: 17-ն ահագին տարբերու
թիւն սիտի գտնենք հին Սէնցի քա
ջուհւոյ և այժմեան Վասպուրական
գաւառի հայ կանանց մէջ, որոց թու
քամբթ կենաց նկարագիրը, այլ տե
ղական աւերանաց հետ, կը կարգանք
Վասպուրականի տեղագրութեան մէջ,
որ գրուած, ստորագրուած և զըր
կուած է Էջգային վարչութեան (1):
17-ն քան նախատական են հայութեան
յարգը ճանաչող անձանց համար տեղա
գրութեան այս խօսքերը թէ. «Քիւր
տերը Հայոց կանայքը գրեթէ իւ
րացուցած են 7: Եթէ իրաւ է նոյն
տեղագիրը և ոչ եղբերու արագ, աւելի
լաւ էր որ Վասպուրականի կանանց
և մարդկանց անունը չլինէր աշխար
հի երեսին, քան թէ այս տեսակ վատ
և նախատական անուն կրէին: Եթէ
ստոյգ են Վանցի և Սուշի տեղա
գրերը, մեծ ամօթ տեղական հայ բը
նակաց, որոնք իրենց ցածութեան և
ամարդութեան նկարագիրը հրապա
րակ կը հանեն առանց պատկառելու:

Եթէ Քիւրտերը Հայերէն սակաւա
թիւ չլինէին, եթէ Օսմանեան Տէ
րութիւնը Քիւրտերուն պաշտպան լի
ներ (որ այնպէս չէ), դարձեալ Հայք
չպիտի յուսային որ իրենց մարդկային
և կրօնական պատիւը իրենց աչքի առ
ջ և անարգութիւն, Սրբալսեական կամ
եկեղեցական օրէնք կը կոպէս Հայու
ձեռքերը իւր անձը և սեպհականու
թիւնը պաշտպանելու համար ամեն մի
ջոյգ որո՞ղ դնելու, և պատմական որ աստե
նի առջև կարող են արդարանալ գաւա
ռականք իրենց ցածութեան և վատա
ւորութեան համար, քանի որ թէ Վրոն
թէ փրկիտօմայութիւն և թէ քաղաքա
կըրթութիւն միաբարբառ կը պարտա
ւորեն զմարդ իր իաւունքը, իր անհա
տական ու ազգային պատիւն և իր կրօ
նական անբծութիւնը կենօք և մահու
ամբ պաշտպանելու: Եւս ժողովրդ
ները, որոնք վրէժխնդիր չեն իրենց ի
րաւանցը, պատուոյն և կոչմանը, ի
րենց կրօնական և ընտանեկան սրբու
թեանը, այն տեսակ ժողովրդները ա
նասուններու երամակ են, քան թէ ժո
ղովուրդ: Եւս կարգէն են մեզ հա
մար Տարնոյ և Վասպուրականի ներ
կայ հայ բնակիչները: Եթէ, ինչպէս
ասացինք, ստոյգ են իրենց տեղագ
րութիւնըն: Երգարեւ՝ մեծ վիշտ է
մեզ այս խօսքերը արտասանել մեր ա
րեւնակից և կրօնակից եղբարց համար,
բայց աւելի լաւ է աժմէն արտասուել
այս ազգային անդգայութիւնը, քան
թէ ապագայ սերունդին թողուլ. ա
ւելի լաւ է այժմէն կշտամբել, քան
թէ ազգային պատմութեան գառն
դատաստանին թողուլ: Սեր Սէնցի,
Բաղնէցի, Սղերուցի, Վանցի և Պաշ
աղիսոյի ազգակիցները, եթէ կը փափա
քին իրենց նախատինքը բառնալ և ի
րենց մարդկային կոչման համեմատ ք
րինաւոր տեղ գրաւել պատմութեան

(1) ՏՖ՝ Մատիս Թիւ 908.

մէջ, պարտաւոր են, ոչ թէ տղայի նման լալ պառաւի նման անիծանել և ստրկաբար աղաղակել թէ Վիւրսեբը այսպէս կ'ընեն, այնպէս կ'ընեն, մենք չենք կարող դիմանալ, մենք պիտի գաղթենք, և այլն այլ պարտական են իրենց լըծնի և ընտանեկան սրբութեան համար, իրենց մարդկային կոչման և արժանաւորութեան համար՝ պաշտպանողական ստոր նախապատիւ համարել ստրկական վատաստութենէն, արիւնական նախանձախնդրութիւնը՝ արդայական լաց ու կոծէն և պատուաւոր մահը՝ անպատիւ կեանքէն։ Այս կը պատուիրեն օրէնք և մարդկութիւն, այս կը պահանջեն իրաւունք և պարտք։

Ով ականջ ունի, թող լսէ, ով սիրտ ունի, թող զգայ։

ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆ ՊԱՍՏԱՆՈՅ

(Երբեմնակութիւն, տես թիւ 8)։

Հայրս յարմար առիթ համարելով անոր Լաւրէի Տաթևը տուաւ, իրեն զբօսանաց ժամերուն մէջ կարգաւ լու։ Այս զանոնք տեսնելով և առանց ոչ մի բացատրութեան կարօտութիւն ունենալու հասնալով սկսաւ ինքն ու յօրինել, և այնքան յառաջացաւ, որ միշտ ներկայ կը գտնուէր այն շաբաթական ժողովներուն, ուր փարիզի բոլոր հանձարեղ անձինքը կը ժողովէին իրենց երկասիրութիւնները բերելու՝ կամ ուրիշները քննելու համար։ Եղբայրս այս ժողովոց մէջ նշառաւոր էր թէ քննութեան և թէ իրեն արդեանց համար, որովհետեւ ինքը

չարունակ նորանոր բաներ կամ իրողութիւններ բերողներէն մէկն էր։ Այս կաճառաց կամ ժողովոց մէջ Խաւիայէն, Վերմանիայէն և ուրիշ օտար երկիրներէն զրկած խնդիրներ կային որոյ իւրաքանչիւրին վրայ եղբայրս իրեն կարծիքը յայտնեց, այնքան ճշգուծեամբ որ ուրիշներէն մէկը չէր կարողացած, քանզի այնպիսի կենդանի լոյս մը ունէր անիկա, որ պատահեցաւ երբեմն ուրիշներէն չը նշմարուած սխալները ինքը տեսաւ և դարգէց։ Սակայն այս բոլոր ուսմանց մէջ երկրաչափութեան՝ միմիայն իրեն զօսանաց ժամանակ կը պարապէր, վստքն զի լսողինական լեզուն կանոններու վրայ կը սովորէր, զոր Հայրս առանձինն յօրինած էր։ Այս որովհետեւ այս գիտութեան մէջ, իրեն այնքան եռանդեամբ փնտռած ճշմարտութիւնը կը գտնէր, ուստի ասոր վրայ այնպիսի գոհ գտնուեցող, որ բոլոր իւր մտադրութիւնը դարձուց անոր վրայ, և այնպէս յառաջողիմութիւններ գրաւ անոր մէջ քիչ ժամանակէն, որ իւր տասն ու վեց տարին խոյսեցնելու մէջ ճառ մը գրեց, և այս՝ մաթի այնպիսի մեծ ճիգ մը համարուեցաւ, որ ամեն մարդ կրէր թէ Լաւրէի մէջ երկրաչափէն ի վեր երբեք այսպիսի կատարեալ գործ մը չը տեսնուեցաւ, և իմաստուն անձինքը կը խորհէին զանոնք տպելու, զի նոքա կ'ըսէին որ այն երկը միշտ զարմանալի պիտի ըլլայ, և նաեւ եթէ տպուէր որ այն ժամանակի մէջ ասիկա հնարողը տասն ու վեց տարեկան հասակին մէջէր, աւելի այս պարագայս պիտի յաւելնէր աւելորդ արժանաւորութիւնը, բայց որովհետեւ եղբայրս՝ փառասիրութեան և համբաւոյ տենչը իր մէջ չունենալով՝ արժէք չը տուաւ անոր շատ և այսպէս այս երկը չը տպուեցաւ։